



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ  
Հ Ր Ա Մ Ա Ն**

ք. Երևան

«19» 08 2021թ N° 713-Ն

**ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ  
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ  
ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 10-րդ կետով.

**հ Ր ա մ ա յ ու մ ե մ.**

1. Հաստատել Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքի կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի 1-ի:
2. Հաստատել կորպորատիվ կառավարման պրակտիկայի վերլուծության ամփոփ հաշվետվության ձևանմուշը՝ համաձայն հավելվածի 2-ի:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ինձ:

## ԿԱՐԳ

### ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման (այսուհետ՝ Միջոցառում) շրջանակում տրամադրվող օժանդակության նպատակն է տնտեսավարողների համար ստեղծել մատչելի ֆինանսական միջոցների հասանելիության հնարավորություն՝ պահանջարկի փոփոխվող պայմաններին արձագանքելու, արտաքին մարտահրավերներին դիմակայելու և ըստ այդմ գործունեությունը շարունակելու կամ վերադասավորվելու ու փոփոխված տնտեսական իրավիճակին հարմարվելու և զարգացման ռազմավարությունը ճշգրտելու գործողություններ իրականացնելու համար:
2. Սույն հավելվածում «տնտեսավարող» եզրույթն օգտագործվում է ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 355-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կիրառված իմաստով:
3. Օժանդակությունը տրամադրվում է տնտեսավարողներին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություն) ստացվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով: Ընդ որում, վարկերի վերադարձի ռիսկն ամբողջությամբ կրում է ֆինանսական կազմակերպությունը:
4. Օժանդակության ձևերը կիրառելի են այն վարկերի համար, որոնք տրամադրվում են տնտեսավարողներին հետևյալ ծախսերից մեկի կամ մի քանիսի իրականացման նպատակով՝
  - 4.1. վարկային հայտի ներկայացման օրվա դրությամբ առկա (չվճարված) և հետագա 6 ամսվա վարկային պարտավորությունների (ներառյալ տույժերի, տուգանքների և տուժանքների) մարում՝ պայմանով, որ վարկային պայմանագրերը կնքվել են մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Սույն ենթակետի իմաստով վարկային պարտավորություններ են համարվում վարկային հայտի ներկայացման օրվա դրությամբ ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հետ մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը կնքված վարկային պայմանագրերով ստացված վարկերի մայր գումարները և տոկոսագումարները (ներառյալ տույժերի, տուգանքների և տուժանքների), որոնք վարկային հայտի ներկայացման օրվա դրությամբ հանդիսանում են ժամկետանց (չվճարված), և/կամ վարկային հայտի ներկայացման օրվանից սկսված հետագա 6 ամիսների ընթացքում ենթակա են մարման՝ համաձայն տվյալ վարկային պայմանագրերի մարման գրաֆիկների:
  - 4.2. վարկային հայտի ներկայացման օրվա դրությամբ առկա (չվճարված) և մինչև 2021 թվականի հուլիսի 25-ը գոյացած հարկային պարտավորությունների մարում: Սույն ենթակետի իմաստով հարկային պարտավորություններ են համարվում մինչև 2021 թվականի հուլիսի 25-ը գոյացած և վարկային հայտի ներկայացման օրվա դրությամբ առկա (չվճարված,



ժամկետանց) պետական կամ համայնքի բյուջե հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումները (ներառյալ տույժերի, տուգանքների և տուժանքների) մարում:

4.3. Նոր սարքերի և սարքավորումների գնում կամ ներմուծում՝ պայմանով, որ տվյալ սարքերը և սարքավորումները պետք է օգտագործվեն Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում արտադրություն կազմակերպելու կամ արտադրությունն ընդլայնելու, ծառայությունների մատուցման և աշխատանքների կազմակերպման նպատակով: Սույն ենթակետի իմաստով նոր սարքեր և սարքավորումներ են հանդիսանում ամբողջովին նոր, նախկինում չօգտագործված, չշահագործված սարքերը և սարքավորումները, որոնց գնումը կամ ներմուծումը իրականացվում է տվյալ սարքը կամ սարքավորումը արտադրող կամ վաճառող (վերավաճառող, պաշտոնական ներկայացուցիչ հանդիսացող) կազմակերպությունից:

4.4. Որոշման հավելվածի 4-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում «F41 Շենքերի շինարարություն» ոլորտում տնտեսական գործունեության իրականացումից առաջացած պետական կամ համայնքի բյուջե հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումների, տնտեսավարողի աշխատակիցներին աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճարումների, կապալի և մատակարարման պայմանագրերով առաջացած պարտավորությունների վճարումների իրականացում: Սույն ենթակետի իմաստով՝

ա) վճարում է համարվում վարկային հայտի ներկայացման օրվա դրությամբ առկա (չվճարված) և մինչև 2021 թվականի հուլիսի 25-ը գոյացած և հետագա 6 ամսվա պարտավորությունների մարումները,

բ) տնտեսավարողի աշխատակիցներին աշխատավարձ կամ դրան հավասարեցված վճարումների նպատակով վարկային միջոցները տրամադրվում են յուրաքանչյուր աշխատակցի դեպքում ոչ ավելի, քան ամսական 500 000 դրամ գումարի չափով՝ առավելագույնը վեց ամսվա համար:

գ) հարկային պարտավորություններ են համարվում մինչև 2021 թվականի հուլիսի 25-ը գոյացած և վարկային հայտի ներկայացման օրվա դրությամբ առկա (չվճարված, ժամկետանց) և հետագա 6 ամսվա պետական կամ համայնքի բյուջե հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների վճարումները (ներառյալ տույժերի, տուգանքների և տուժանքների) մարումները:

5. Օժանդակության գործիքի կիրառմամբ տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

5.1. արժույթը՝ դրամով կամ արտարժույթով (արտարժույթով վարկերի նկատմամբ սուբսիդավորման գործիքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, եթե վարկառուն իր ձեռնարկատիրական գործունեության արդյունքում կստանա տվյալ վարկի սպասարկման համար բավարար չափով արտարժույթով հասույթ),

5.2. ժամկետը՝ մինչև 60 ամիս, սակայն միջոցառմամբ սահմանված սուբսիդավորումն իրականացվում է միայն վարկի մինչև 12 ամիս ժամանակահատվածի համար, իսկ արտարժույթով վարկերի դեպքում՝ 6-ամսյա ժամանակահատվածի համար,

5.3. վարկի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված՝ մինչև 12 ամիս, իսկ արտարժույթով վարկերի դեպքում՝ մինչև 6 ամիս,

5.4. մեկ տնտեսավարողի՝ օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկերի՝ Միջոցառման շրջանակներում սուբսիդավորվող մասի առավելագույն գումարը՝ 1 մլրդ դրամ, իսկ արտարժույթով վարկավորման դեպքում՝ 1 մլրդ դրամին համարժեք,



5.5. վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումներով,

5.6. առավելագույն փաստացի տոկոսադրույքը տարեկան 14,5 % դրամով վարկերի և տարեկան 10 % արտարժույթով վարկերի դեպքում:

6. Միջոցառման չափանիշներին բավարարող տնտեսավարողները կարող են հայտ ներկայացնել ֆինանսական կազմակերպություն, որով տալիս են նաև իրենց համաձայնությունը՝ տրամադրվող օժանդակության վերաբերյալ տվյալները հրապարակելու վերաբերյալ: Հայտի բավարարման դեպքում սույն միջոցառմամբ սահմանված կանոնների համաձայն կիրականացվի տվյալ վարկի տոկոսների սուբսիդավորում՝ տվյալ վարկի տոկոսների՝ ֆինանսական կազմակերպության կողմից տրամադրված վարկի տոկոսի ամբողջական չափով, վարկի ժամկետի 12-ամսյա ժամանակահատվածի համար, իսկ արտարժույթով վարկերի դեպքում՝ 6-ամսյա ժամանակահատվածի համար:

7. Միջոցառման շրջանակում վարկերի տրամադրման վերջնաժամկետը 2022 թվականի փետրվարի 28-ն է: 2022 թվականի մարտի 1-ից Միջոցառման շրջանակներում վարկերի տրամադրման գործընթացներ չեն իրականացվում:

8. Միջոցառման շրջանակում օժանդակություն ստացած այն տնտեսավարողները, որոնք չեն հանդիսանում բաժնետիրական ընկերություն, վարկի ստացման օրվանից 90-օրյա ժամկետում վերակազմակերպվում են բաժնետիրական ընկերության և ֆինանսական կազմակերպություն են ներկայացնում կորպորատիվ կառավարման պրակտիկայի վերլուծության ամփոփ հաշվետվություն՝ ներառյալ կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման ծրագիրը և իրականացված աշխատանքները:

9. Միջոցառման շրջանակում օժանդակություն ստացած բաժնետիրական ընկերություն հանդիսացող տնտեսավարողները վարկի ստացման օրվանից 90-օրյա ժամկետում ֆինանսական կազմակերպություն են ներկայացնում կորպորատիվ կառավարման պրակտիկայի վերլուծության ամփոփ հաշվետվություն՝ ներառյալ կորպորատիվ կառավարման համակարգի կատարելագործման ծրագիրը և իրականացված աշխատանքները:

10. Սույն հավելվածի 8-րդ և 9-րդ կետերում նշված հաշվետվությունը պետք է համապատասխանի ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 30-ի N 1769-Ա որոշմամբ հաստատված պայմաններին և նույն որոշմամբ հաստատված հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հրապարակվի տնտեսավարողի ինտերնետային կայքում:

11. Սույն հավելվածի 8-րդ և 9-րդ կետերում նշված պայմանը չկատարելու դեպքում տվյալ տնտեսավարողին տրամադրված վարկի տոկոսի սուբսիդավորման գործընթացը դադարեցվում է, իսկ պետության կողմից վճարված սուբսիդավորման գումարները բանկի միջոցով ենթակա են վերադարձման:

12. Ֆինանսական կազմակերպություններն ինքնուրույն են իրականացնում վարկառուների վարկունակության գնահատումը և վարկերի տրամադրումը, որոնք պետք է համապատասխանեն միջոցառմամբ սահմանված չափանիշներին և նպատակներին: Վարկերը ֆինանսական կազմակերպությունների կողմից պետք է տրամադրվեն բացառապես անկանխիկ եղանակով: Ընդ որում, շահառուները ստացված վարկային միջոցների հաշվին իրականացվող վճարումները նույնպես պետք է իրականացնեն անկանխիկ եղանակով:

13. Օժանդակության դեպքում վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման գումարը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից փոխանցվում է ֆինանսական կազմակերպության համապատասխան հաշվին՝ ֆինանսական

կազմակերպության հայտի հիման վրա: Տոկոսադրույքների սուբսիդավորման գործընթացը կարգավորվում է ֆինանսական կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության միջև կնքվող պայմանագրերով:

14. Ֆինանսական կազմակերպությունը ամիսը մեկ անգամ, բայց, ոչ ուշ, քան հաջորդ ամսվա հինգերորդ աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ներկայացնում է տեղեկատվություն՝ տվյալ ամսում տրամադրված նոր վարկերի վերաբերյալ, որը պետք է պարունակի տվյալ շահառուի անունը, ՀՎՀՀ-ն, տրամադրված վարկի չափը և նպատակները:

15. Միջոցառման շրջանակում տրամադրված օժանդակության գործիքի կիրառման մոնիթորինգն իրականացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝ եռամսյա կտրվածքով:

16. Միջոցառման շրջանակներում օժանդակություն ստացած տնտեսավարողների ցանկը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:



**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՆՄՈՒՇ**

Նկարագրական մաս

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ. \_\_\_\_\_

ՀԱՍՑԵ.

ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔ. էլ. հասցե

**1. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔԸ**

Ներածական խոսքում պետք է համառոտ ներկայացվի հաշվետու տարում Ընկերության կորպորատիվ կառուցվածքը և դրա բարելավման նպատակով ձեռնարկված քայլերը:

**2. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Համաձայն Ընկերության կանոնադրության և Կորպորատիվ Կառավարման Կանոնագրքի պահանջների, Ընկերությունը սահմանել է հետևյալ կորպորատիվ կառուցվածքը.

- ա) Բաժնետերերի ընդհանուր ժողով,
- բ) Խորհուրդ,
- գ) Խորհրդի հանձնաժողովներ (մանրամասն նշել),
- դ) Գործադիր մարմին

Ընկերության նշանակալից բաժնետերերն են.

[Եթե Ընկերությունը մտնում է Ընկերությունների որևէ խմբի մեջ, անհրաժեշտ է տալ նշանակալից բաժնետերերի և խմբի սխեմատիկ պատկերը, խմբի կառուցվածքի, ինչպես նաև մայր ընկերության և դուստր ընկերությունների խորհուրդների հարաբերությունների, գործառույթների և գործունեության նկարագրությունը]:

**3. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ (ԲԸԺ)**

1. Հաշվետու տարում գումարվել են Տարեկան ընդհանուր ժողով և \_\_\_\_\_ արտահերթ ընդհանուր ժողովներ [նշել արտահերթ ժողովների քանակը, եթե այդպիսիք անցկացվել են]. Բոլոր ԲԸԺ-երը գումարվել են Ընկերության գլխամասային գրասենյակում [ԿԱՄ նշել ԲԸԺ(եր)-ի գումարման հասցեն. \_\_\_\_\_]:

2. Տարեկան ընդհանուր ժողովը անցկացվել է \_\_\_\_\_, արտահերթ ընդհանուր ժողով(ներ)ը անցկացվել են \_\_\_\_\_ [նշել ժողովների անցկացման օրը, ամիսը, տարեթիվը]:

3. ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերը ԲԺԸ-ի մասին ծանուցվել են [նշել. փոստով/էլ. փոստով/ համապետական լրագրում տպագրված ծանուցմամբ] \_\_\_\_\_-ին [նշել ծանուցման ուղարկման ժամանակը], այն է ԲԸԺ-ից \_\_\_\_\_ օր առաջ [նշել, թե ԲԸԺ-ի գումարման օրվանից քանի օր առաջ]. Օրակարգը և համապատասխան փաստաթղթերը ուղարկվել են [կամ ԲԺԸ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց հասանելի են դարձել Ընկերության ինտերնետային կայքում]: Օրակարգի և ԲԸԺ-ին վերաբերող տեղեկությունները և փաստաթղթերը ԲԸԺ-ին մասնակցելու իրավունք ունեցող անձանց տրամադրելու կարգը սահմանվում է ընկերության կանոնադրությամբ, [նշել կանոնադրության համապատասխան հոդվածը], հասանելի է ընկերության ինտերնետային կայքում [նշել կայքի համապատասխան հոդվածը]:

4. Բաժնետերերը հնարավորություն են ունեցել ԲԸԺ-ին մասնակցել լիազորված ներկայացուցչի միջոցով: Լիազորագրի ձևերը, Ընկերության կանոնադրության \_\_\_\_\_ հոդվածով սահմանված կարգով, հասանելի են եղել բաժնետերերին [նշել Ընկերության կանոնադրության համապատասխան հոդվածը]:

5. Բաժնետերերը, Ընկերության կանոնադրության \_\_\_\_\_ հոդվածով սահմանված կարգով, քվեարկել են կումուլյատիվ քվեարկությամբ [նշել Ընկերության կանոնադրության համապատասխան հոդվածը]:

6. Տարեկան ԲԸԺ-ի օրակարգը, լիազորագրի ձևը, քվեարկության արդյունքները և նիստի արձանագրությունը հասանելի են Ընկերության ինտերնետային կայքում \_\_\_\_\_ [նշել համապատասխան հղումը]:

#### 4. ԽՈՐՀՈՒՐԴԸ

##### **Խորհրդի գործառույթները**

Կանոնագրի 8-րդ հոդվածը և Ընկերության կանոնադրության \_\_\_\_\_ հոդված(ներ)ը [նշել կանոնադրության համապատասխան հոդված(եր)ը] սահմանում են Խորհրդի բացառիկ և պատվիրակված իրավասությունները, որոնք հասանելի են \_\_\_\_\_ [նշել համապատասխան հղումը, որտեղ նշված փաստաթղթերը հասանելի են]։

##### **Խորհրդի կազմը**

\_\_\_\_\_ դրությամբ, [նշել ԲԸԺ-ի անցկացման ժամկետը] Ընկերության Խորհուրդը բաղկացած է \_\_\_\_\_ անդամից [նշել անդամների թիվը], որոնցից \_\_\_\_\_ ոչ գործադիր են և \_\_\_\_\_ անկախ [նշել համապատասխան թվերը]։

Համաձայն Կանոնագրի 10-րդ հոդվածի և ընկերության կանոնադրության \_\_\_\_\_ հոդվածի [նշել Կանոնադրության համապատասխան հոդվածը], “Անկախ” է համարվում Խորհրդի այն անդամը, ով.

1. Վերջին 3 տարվա ընթացքում ընկերությունում գործադիր ղեկավար պաշտոն չի զբաղեցրել, չի աշխատել ընկերությունում կամ դրա հետ փոխկապակցված այլ ընկերությունում, բացառությամբ որպես Խորհրդի անդամ պաշտոնավարելուց:

2. Վերջին 3 տարվա ընթացքում ընկերությունից կամ ընկերության հետ փոխկապակցված անձանցից ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի ստացել որևէ վարձատրություն, բացառությամբ որպես Խորհրդի անդամ ստացած վարձատրությունից:

3. Վերջին 3 տարվա ընթացքում ինչպես ուղղակիորեն, այնպես էլ որպես գործընկեր, նշանակալից բաժնետեր, Խորհրդի անդամ, գործադիր մարմնի ղեկավար կամ հաշվապահ, չի ունեցել նյութական բնույթի որևէ գործարար հարաբերություն, այդ թվում՝ վարկ կամ փոխառություն ստանալու և տրամադրելու հետ կապված, ընկերության կամ ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ:

4. Վերջին 5 տարվա ընթացքում չի հանդիսացել ընկերության գործող կամ նախկին արտաքին աուդիտին իրականացնող անձի, նրա հետ փոխկապակցված ընկերությունների բաժնետեր կամ աշխատող:

5. Վերջին 10 տարվա ընթացքում 6 տարուց ավելի չի հանդիսացել Ընկերության Խորհրդի անդամ և չի հանդիսանում վերոհիշյալ անձանցից որևէ մեկի ընտանիքի անդամ:

6. Չի հանդիսանում ընկերության նշանակալից բաժնետեր կամ նրա ներկայացուցիչ ցուցակված ընկերությունների դեպքում (նշանակալից է համարվում իր հետ փոխկապակցված անձանց հետ միասին ընկերության 10-ից ավելի տոկոս քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը):



| ԽՈՐՀՈՒՐԴ          |                       |                          |       |                        |
|-------------------|-----------------------|--------------------------|-------|------------------------|
| Պաշտոնը և անունը  | Գործադիր <sup>1</sup> | Ոչ գործադիր <sup>2</sup> | Անկախ | Խորհրդի անդամ է սկսած՝ |
| 1. Նախագահ՝ _____ |                       |                          |       |                        |
| 2. Անդամ՝ _____   |                       |                          |       |                        |
| 3. Անդամ՝ _____   |                       |                          |       |                        |
| 4. Անդամ՝ _____   |                       |                          |       |                        |
| 5. Անդամ՝ _____   |                       |                          |       |                        |
| 6. Անդամ՝ _____   |                       |                          |       |                        |
| 7. Անդամ՝ _____   |                       |                          |       |                        |

Խորհրդի անդամների համառոտ կենսագրությունները՝ ներառյալ Կանոնագրքի 12(4) հոդվածով նախատեսված տեղեկությունները՝ տարիքը, մասնագիտությունը, հիմնական պաշտոնը, քաղաքացիությունը, այլ ընկերություններում ունեցած պաշտոնները, որոնք առնչվում են խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ, նշանակման օրը, պաշտոնավարման ընթացիկ ժամկետը, վերջին 3 տարվա աշխատանքային փորձը, ընկերությունում և փոխկապակցված ընկերություններում բաժնետոմսերի ուղղակի կամ անուղղակի տիրապետումը, ինչպես նաև խորհրդի անդամի անկախ լինելու հանգամանքը, տարվա ընթացքում խորհրդի անդամների պաշտոնաթողության և պաշտոնանկության, նրանց գործառույթների, ինչպես նաև Խորհրդի հանձնաժողովներին անդամության վերաբերյալ տեղեկությունները բացահայտված են Ընկերության տարեկան հաշվետվության մեջ, որը հասանելի է ընկերության ինտերնետային կայքում \_\_\_\_\_ [նշել համապատասխան հղումը]։

#### ԿԱՍ

Խորհրդի անդամների համառոտ կենսագրությունները՝ ներառյալ Խորհրդի անկախ անդամների վերաբերյալ տվյալները, տարվա ընթացքում խորհրդի անդամների պաշտոնաթողության և պաշտոնանկության, նրանց գործառույթների, ինչպես նաև Խորհրդի հանձնաժողովներին անդամության վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են ստորև.

#### Նախագահ՝ անուն, ազգանուն

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ

Կրթություն

Աշխատանքային փորձառություն

Հիմնական որակավորում

Ընկերությունում աշխատած տարիներ

Անդամությունը Ընկերության կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին

Անձնական պարտականություններ և խնդիրներ

Աշխատանքը այլ Ընկերություններում/խորհուրդներում:

#### Խորհրդի անդամ՝ անուն, ազգանուն

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ

Կրթություն

<sup>1</sup> Խորհրդի գործադիր անդամը Ընկերության ամենօրյա ղեկավարման մեջ ներգրավված անձն է:

<sup>2</sup> Համաձայն Կանոնագրքի, Խորհրդի ոչ գործադիր անդամը այն անձն է, ով ներգրավված չէ Ընկերության կամ նրա որևէ դուստր ընկերության ընթացիկ ղեկավարման մեջ:



Աշխատանքային փորձառություն  
 Հիմնական որակավորում  
 Ընկերությունում աշխատած տարիներ  
 Անդամություն Ընկերության կամ այլ Ընկերությունների Խորհրդի հանձնաժողով(ներ)ին  
 Անձնական պարտականություններ և խնդիրներ  
 Աշխատանքն այլ Ընկերություններում/խորհուրդներում:

.....  
 [Լրացնել ըստ անհրաժեշտության]

### Խորհրդի գործունեությունը

\_\_\_\_\_ տարվա ընթացքում [նշել համապատասխան տարին], Խորհուրդը գումարել է \_\_\_\_\_ նիստ [նշել տարվա ընթացքում անցկացրած նիստերի քանակը], որից \_\_\_\_\_ [նշել հեռակա քվեարկությամբ նիստերի քանակը] հեռակա քվեարկությամբ:

Խորհրդի անդամների մասնակցությունը Խորհրդի նիստերին ունի հետևյալ պատկերը.

| Պաշտոն և անուն    | Նիստերին մասնակցությունը անձամբ | Նիստերին մասնակցությունը հեռակա կարգով | Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր |
|-------------------|---------------------------------|----------------------------------------|----------------------------------------|
| 1. Նախագահ՝ _____ |                                 |                                        |                                        |
| 2. Անդամ՝ _____   |                                 |                                        |                                        |
| 3. Անդամ՝ _____   |                                 |                                        |                                        |
| 4. Անդամ՝ _____   |                                 |                                        |                                        |
| 5. Անդամ՝ _____   |                                 |                                        |                                        |
| 6. Անդամ՝ _____   |                                 |                                        |                                        |
| 7. Անդամ՝ _____   |                                 |                                        |                                        |

### Խորհրդի աշխատանքի գնահատումը

Խորհուրդն ընդունել է [չի ընդունել] գնահատման քաղաքականություն: Խորհուրդն իրականացրել է ինքնագնահատում [կամ գնահատում՝ ներգրավելով արտաքին գնահատող]՝ համաձայն գնահատման քաղաքականության և ընթացակարգերի:

Գնահատման արդյունքում արված հիմնական առաջարկներն են.

\_\_\_\_\_  
 \_\_\_\_\_  
 \_\_\_\_\_

[Լրացնել ըստ անհրաժեշտության]

### 5. ԽՈՐՀՐԴԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԸ

Խորհուրդը ստեղծել է հետևյալ հանձնաժողովները.

ա) Աուդիտի հանձնաժողով

բ) .....

[Լրացնել ըստ անհրաժեշտության]

### Աուդիտի հանձնաժողով

Աուդիտի հանձնաժողովը բաղկացած է \_\_\_\_\_ [նշել աուդիտի հանձնաժողովի անդամների թիվը] անդամից.

Աուդիտի հանձնաժողովի բոլոր անդամները խորհրդի անդամ են:

Աուդիտի հանձնաժողովի անդամներն են.

| ԱՌԻԴԻՏԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ                                                                                        |             |        |                                     |
|------------------------------------------------------------------------------------------------------------|-------------|--------|-------------------------------------|
| Պաշտոն և անուն                                                                                             | Ոչ-գործադիր | Անկախ* | Աուդիտի հանձնաժողովի անդամ է սկսած՝ |
| 1. Նախագահ՝ _____                                                                                          |             |        |                                     |
| 2. Անդամ՝ _____                                                                                            |             |        |                                     |
| 3. Անդամ՝ _____                                                                                            |             |        |                                     |
| *Եթե Աուդիտի հանձնաժողով ստեղծված չէ, կամ անդամները ոչ-գործադիր կամ անկախ չեն, համառոտ բացատրել, թե ինչու: |             |        |                                     |

Աուդիտի հանձնաժողովի գործառույթները և պարտականությունները սահմանված են Աուդիտի հանձնաժողովի Կանոնակարգով, որը հաստատվել է խորհրդի կողմից \_\_\_\_\_ [նշել հաստատման ժամանակը].

Աուդիտի հանձնաժողովի Կանոնակարգը հասանելի է Ընկերության ինտերնետային կայքում՝ \_\_\_\_\_ [նշել համապատասխան հղումը, որտեղ փաստաթուղթը հասանելի է]:

Համաձայն Կանոնագրի 16-րդ հոդվածի և Աուդիտի հանձնաժողովի Կանոնակարգի \_\_\_\_\_ հոդվածի [նշել համապատասխան հոդվածը], Աուդիտի հանձնաժողովը հաշվետու է խորհրդին, սահմանում է բարելավում պահանջող հիմնահարցերի շրջանակը, առաջարկություններ է ներկայացնում խորհրդին ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ, և իրականացնում է հետևյալ բացառիկ գործառույթները՝

ա. հետևել ընկերության ֆինանսական հաշվետվությունների ամբողջականությանը և ընկերության ֆինանսական գործունեությանը վերաբերող հայտարարություններին՝ դիտարկելով դրանցում տեղ գտած կարևոր պնդումները ֆինանսական հաշվետվողականության վերաբերյալ, վերանայել եռամսյակային և տարեկան հաշվետվությունները և խորհրդին ու ԲԸԺ-ին առաջարկություն ներկայացնել դրանց հաստատման վերաբերյալ,

բ. վերանայել ընկերության ներքին վերահսկողության, ներքին աուդիտի, ինչպես նաև իրավական ակտերին և այլ պահանջներին համապատասխանելու և ռիսկերի կառավարման համակարգերը,

գ. դիտարկել ընկերության ներքին աուդիտի գործունեությունը,

դ. արտաքին աուդիտն իրականացնող անձի ընտրության, նրա աշխատանքի պայմանների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել խորհրդին, դրանք՝ ԲԸԺ-ի ընդհանուր ժողովի քննարկմանը և վերջնական հաստատմանը ներկայացնելու համար,

ե. ստանալ և քննարկել արտաքին աուդիտն իրականացնող անձի հաշվետվությունը՝ այդ թվում ներքին հսկողության թերությունների վերաբերյալ նրա բարձրագրած բոլոր հիմնահարցերը և առաջարկությունները,

զ. դիտարկել և ստուգել արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը, օբյեկտիվությունը և աուդիտի գործընթացի արդյունավետությունը՝ հաշվի առնելով համապատասխան ներպետական մասնագիտական և օրենսդրական պահանջները,



է. նվազագույնը տարեկան մեկ անգամ հանդիպել արտաքին աուդիտին իրականացնող անձին՝ քննարկելու աուդիտի հետ կապված հարցերը:

#### **Աուդիտի հանձնաժողովի գործունեությունը**

\_\_\_\_\_ տարվա ընթացքում [նշել համապատասխան տարին] Աուդիտի հանձնաժողովը գումարել է \_\_\_\_\_ նիստ [նշել նիստերի թիվը], որոնցից \_\_\_\_\_ առկա, իսկ \_\_\_\_\_ հեռակա քվեարկության կարգով: [նշել ըստ անհրաժեշտության]:

#### **Մասնակցությունը Աուդիտի հանձնաժողովի նիստերին**

| Պաշտոն և անուն    | Նիստերին մասնակցությունը անձամբ | Նիստերին մասնակցությունը հեռակա կարգով | Նիստերի քանակը, որոնց պետք է մասնակցեր |
|-------------------|---------------------------------|----------------------------------------|----------------------------------------|
| 8. Նախագահ՝ _____ |                                 |                                        |                                        |
| 9. Անդամ՝ _____   |                                 |                                        |                                        |
| 10. Անդամ՝ _____  |                                 |                                        |                                        |

Աուդիտի հանձնաժողովի հիմնական առաջարկությունները հորհրդին, ինչպես նաև տեղեկությունը՝ հորհրդի կողմից այդ առաջարկները ընդունվելու կամ մերժվելու վերաբերյալ, ներառված են Ընկերության տարեկան հաշվետվության \_\_\_\_\_ գլխում [նշել համապատասխան գլուխը և էջը], որը հասանելի է Ընկերության ինտերնետային կայքում \_\_\_\_\_ [նշել համապատասխան հղումը]։

#### **6. ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆ**

Ընկերության գործադիր մարմինը բաղկացած է --(--) տնօրենից [նշել գործադիր մարմնում ընդգրկված տնօրենների թիվը]։

Գործադիր մարմնի անդամների համառոտ կենսագրությունները, ինչպես նաև նրանց գործառնությունների և պարտականությունների մանրամասները, բացահայտված են Ընկերության տարեկան հաշվետվության \_\_\_\_\_ գլխում [նշել], որը հասանելի է ընկերության ինտերնետային կայքում \_\_\_\_\_ [նշել համապատասխան հղումը]։

#### **ԿԱՄ**

##### **Գլխավոր գործադիր տնօրեն՝**

Ծննդյան օր, ամիս, տարեթիվ

Կրթություն

Աշխատանքային փորձառություն

Հիմնական որակավորում

Ընկերությունում աշխատած տարիներ

Անդամություն Ընկերության կամ այլ Ընկերությունների հանձնաժողով(ներ)ին  
Անձնական պարտականություններ և խնդիրներ:

#### **7. ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏ**

Ընկերության ներքին աուդիտին իրականացնող անձն է --- ---յան [նշել անունը], ով նշանակվել է հիմնադիրի կողմից և Աուդիտի հանձնաժողովի միջոցով հաշվետու է հորհրդին:

Ընկերության ներքին աուդիտն իրականացնողն անձը իր գործառույթներն իրականացնում է համաձայն Կանոնագրքի 27-րդ հոդվածի:

#### 8. ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ընկերության կորպորատիվ քարտուղարն է \_\_\_\_\_ [նշել անունը], ով նշանակվել է Խորհրդի \_\_\_\_\_ [նշել ժամանակը] որոշմամբ:

Ընկերության կորպորատիվ քարտուղարը իր գործառույթներն իրականացնում է համաձայն Կանոնագրքի 22-րդ հոդվածի:

#### 9. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԻԴԻՏ

Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձ է նշանակվել \_\_\_\_\_ [նշել], որն արտաքին աուդիտն իրականացնող անձի պարտականություններն իրականացնում է \_\_\_\_\_ [նշել այդ աուդիտորի առաջին անգամ նշանակվելու ժամանակը]:

Արտաքին աուդիտն իրականացնող անձի և Ընկերության հարաբերությունները կարգավորվում են համաձայն Կանոնագրքի 28-րդ հոդվածի:

Համաձայն Կանոնագրքի 28-րդ հոդվածի, Ընկերությունը ներդրել է չափորոշիչներ՝ որոշելու արտաքին աուդիտն իրականացնող անձի անկախությունը ընկերությունից: Չափորոշիչները դիտարկվել են Աուդիտի հանձնաժողովի կողմից, իսկ դիտարկման արդյունքները ընգրկվել են տարեկան հաշվետվության \_\_\_\_\_ գլխում [նշել], որը հասանելի է Ընկերության ինտերնետային կայքում \_\_\_\_\_ [նշել համապատասխան հղումը]:

#### 10. ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընկերության տարեկան հաշվետվությունը ներկայացվել և հաստատվել է Բաժնետերերի ընդհանուր ժողովում՝ \_\_\_\_\_ [նշել երբ]:

Տարեկան հաշվետվությունը պարունակում է Կանոնագրքի 23-րդ հոդվածով սահմանված ողջ տեղեկությունները և տեղադրված է Ընկերության ինտերնետային կայքում \_\_\_\_\_ [նշել համապատասխան հղումը]:

**Գործադիր տնօրեն**